


ՏԻՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե. ԲՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որևէ գրութիւն պէտք է ուղղել աս Տնօրին. ԱՐՇԱՆՈՅՍ քաղաքի ԳԱՆՔԷ (Եգիպտոս)



ՔԱՆԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ	
Հարկերու ողջ դասիկն	60
Վեցամսեայ	35
ՍՏԱՐ ԵՐԿՐՈՐԵՐ	
Տարեկան	20
Վեցամսեայ	12

E. TOROSSIAN  
Direc.-propr. du journal arménien  
ARCHALOUICÉ  
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՏԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆՆԻԿ ԵՒ ԹՂԹԱՍՏԱՐԻ ԺԱԽՔԸ ԽՈՒՔԱԳՐՈՒՔԵԱՆ ՎՐԱՅ Է :

ԽՈՒՔԱԳՐՈՒՔԵԱՆ ՈՂՂՐԱՑԸ ԳՐՈՒՔԻՆԻՖ ԵՍ Հ՛ՆՆ ՏՐՈՒԻՐ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ ԿԱՆԻՔԻ ԿՄԱՐԵԼԻ ԵՆ

Ի Մ Ք Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ա Ձ Դ

ԱՐՇԱՆՈՅՍԻ Պատ. քաժանորդներէն կը խնդրուի, իրենց ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻՆ ԲԱՇՏԱՆՈՐԴԱԳԻՆԸ զՐԿԵՂ Տնօրինութեան հասցեիս :

ԱՐՏԱՍԱՀԻՄԱՆԻ Պատ. քաժանորդներէն աչ ջերմասկես կը խնդրուի, որ քարտեանիս լնախորդ սարիէն մնացեալ պարտոց կցեղով զրկեղ նաեւ իրենց ԵՐԿՐՈՐԴ Տարեջրչանի քաժանորդագիւնը, եւ հարկ չը թողու մասնաւոր դիւնաւներու, որով լնոր դրժուարութիւն մը պիտի զրջան ԱՐՇԱՆՈՅՍԻ սարիէն քաղաքացիացի Տնօրինութեան :

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Այս անունը տուած են Հելվետիոյ Իւրի Նահանգին տան տիկինները Ընկերութեան մը, զոր կազմած են և որուն նպատակն է կիւնքն արգիւլել արանց մի քանի տեսակ արարքներուն միջամուխ ըլլալէ :

Նահանգային վերջին ընտրութեանց միջոցին կանայք ոմանք, իրենց քաղաքական գաղափարներով, իրենց ամուսնոց հակառակ կուսակցութեանց ի նպաստ քուէ տուած ըլլալով, ընտանեկան բազմաթիւ վէճերու, ապահարզաններու և մարդասպանութեան փորձերու ակամայ տեղի տըւած էին :

Ատոր վրայ, ընտանեկան խաղաղութեան հոգատար մի քանի մայրեր համաձայնելով հաստատեցին այս ընկերութիւնը որ թերեւս առաջինն է իր տեսակին մէջ այնպիսի ժամանակ մը, յորում յառաջագէժ նկատուած ազգերու կիւնքն, իբր թէ տան մէջ ա՛լ ընելիք կամ ուսուցանելիք չունենալով աշխարհը տակն ու վրայ կ'ընեն, արանց մինչև անգամ ամենէն կեղտոտ ամենէն գձուձ, ամենէն անարդ գործերուն մասնակցելու համար :

Հետու ենք այն ժամանակէն, որ տան տիկինը իրեն և իրեններուն պատիւ կը համարէր « տունը կենալ և գուլպայ հիւսել » :

Եթէ այնպիսի առաջարկութիւն մ'ըլլայ մեր տանտիկիններուն, անմիջապէս բարապանը պիտի կանչեն մեզ փրկիչ, կամ

Գահիրէի մէջ Ապպասիյէ տանելու համար :

Իրաւ է որ այսօր մի միայն գուլպայ հիւսել բաւական չէ և գեղեցիկ սեռը թերեւ իրաւունք ունի բարձրաձայն պահանջելու որ գրեւ կարգաւ գիտնայ, դաշնակահարութիւն սորվի, և պարելու կերպերուն մէջ խոր տգէտ չ'ըլլայ : Լիուլի գոհացում ստացաւ իր պահանջներուն . բայց երբ մէկ կողմէն իր փափաքը կը յագեցընէր, միւս կողմէն գուլպան կը մոռնար . և՛ աւելի ըլլալով՝ ուղեց տունն ալ ձգել և հրապարակներու վրայ սըքտալ . կարծես սգեղ սեռին ամենատգեղ վարքն ու բարքը իւրացնելու ճգնելով :

Կնոջ այս ձեռնարկն ալ յաջողութեամբ պատկուեցաւ երկրիս քանի մը կողմերը . բայց՝ իրերու բնական բերմամբ՝ երբ հրապարակի վրայ և հանրային գործերու մէջ կանանց թիւը ստուարացաւ, մայրերու թիւը նուազեցաւ տուններու մէջ, և մարդկային ընկերութիւնը յանգափս փնտսուեցաւ . փնտս՝ որմէ կանայք ալ ունին իրենց մասը կորսնցուցած ըլլալով այն ակնածութիւնը, այն պատկառանքը, այն տեսակ մը պաշտումը, զոր մեր բարեմիտ ու բարեպաշտ նախահարք՝ հակառակ թերեւս չափազանցօրէն իրենց վերագրուած կոչութեան՝ երբէք չ'էին զլանար իրենց պատուարժան տան տիկիններուն և հոգալից մայրերուն :

Տգիտութիւնը հակաբնական է . և՛ միւսնոյն ժամանակ կանանց կոչումին այս աստիճան զեղծումն ալ բնութեան գծած սահմանէն դուրս է :

Ծայրահեղութիւններէ զգուշանալու է միշտ :

Բնութեան մէջ ամեն էակ և ամեն իր մասնաւոր պաշտօն մ'ունի : Կնոջ ամենատարբ պարտականութիւնն է իր սնով զբաղիլ, իր զաւակաց նախնական կրթութեան առաջնորդել . անոնց բնական ուսուցչուհին ըլլալ . մարդկութեան օգտակար անդամներ պատրաստել, որպէս զի՝ անոնց շնորհիւ՝ ազգն ու հայրենիքը ըլլան միշտ մեծ, միշտ բարգաւաճ . մանաւանդ երբէք չ'մոռնալ որ երկրիս վրայ կնոջ միայն տրուած է « գիտութեան հրեշտակ » սրտագրաւ մակդիրը :

Գառնալով մեր նիւթին, կը տեսնենք որ Հելվետուհիք « ընտանեկան պարտականութեան ընկերութիւն » ը հաստատելով առիթէն օգտուեցան ո՛չ միայն իրենց տան խաղաղութիւնը անվրդով պահելու, այլ նաև բազմազան գասակարգին օգնելու համար :

Ընթերցողաց, մանաւանդ ընթերցուհ-

եաց լուրջ ուշադրութեան կը յանձնարարենք ընկերութեան կանոնագրի երրորդ յօդուածին հետեւալ հատուածը :

« . . . Անգամուհիք պարտականութիւնը կ'ստանձնեն հրատարելու ամեն տեսակ ունայնաբանութենէ, բամբասանքէ, և թեթեւ ու անխորհուրդ խօսակցութիւններէ . . . Եւ հետեւեալն ալ

« . . . Կանոնադէմքերը պիտի ենթարկուին ծանր տուգանաց, որոնք պիտի յատկացուին հազուստ, ուտեստ, դպրոցական պիտոյք մատակարարելու նահանգին կարօտ դասակարգին զաւակներուն »

Հոս կը կենանք :

Մեր ազգը քաղաքային ընտրութիւններ չ'ունի . հետեւաբար ընտանեկան իւրաւորութեանց վախ չ'կայ այն կողմէն, զէթ առ այժմ : Բայց Հելվետուհեաց ընկերութեան Գ . Յօդուածէն մէջ բերուած հատուածին մէջ արդեօք չ'կայ բառ մը որ մեղի մատնանիչ ընէ գիտութեանց ուրիշ պատճառներ, որոնց բարձուը այնքան անհրաժեշտ է, որքան մնալը անպէտ և փնասաբեր :

Ոչ միայն կազ ու կռիւներու այն շարժառիթները արտաքսենք մեր մէջէն, այլ նաև աւելի մեծ բան մ'ընենք :

Քանի որ Եւրոպայի ամեն նորութիւնները առանց խտրութեան մեր մէջ մուծանելու մոլութիւնն ունինք, ընտանեկան Հելվետուհեաց այս նորութիւնն ալ իւրացնելու ազնուութիւնն ունենանք, կամ աւելի ճիշտը ըսելով՝ ունենան մեր տիկինները :

Մենք հաւատք ունինք որ Հելվետուհեաց ընկերութեան ոգւով մեր մէջ հաստատուած ընկերութիւն մը այնքան հաստատաբար պիտի ըլլայ որ մեր խեղճ ու լքեալ հայրենակիցները, որբերն ու այրիները լիուլի պիտի ջեռնուն և պիտի կըշտանան գէթ քանի մը տարին . . . անկէ յետոյ եթէ՛ լեզուներու յեղաշրջման շնորհիւ հասոյթի այս տեսակ աղբիւրը դադրի հոսելէ, գոնէ բազմաթիւ ընտանիքներ դարձեալ պիտի օրհնեն այդ ընկերութիւնը, որ իրենց պարգեւած պիտի ըլլայ ընտանեկան և ընկերական սէր և խաղաղութիւն :

Այո՛ . բայց ուր է այն մեծանձն և ընտանեկան Հայուհին որ պիտի փութայ հիմնաքարը դնելու այս « Պարտաճանաչ Հայուհեաց » ընկերութեան :

ՀԱՅՎԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ ՑՍԻՑԱՀԱՆԴԵՍ

(Շարն. նախորդ թիւէն եւ վերջ)

Անմէտ Րիզա իբրեւ տաճիկ գէթ բարոյա- կան մասնակցութիւն ունեցաւ Հայոց կոտորածին. վասնզի եթէ կրնար, պէտք էր ժամանակին օգնել հայոց. եթէ չէր կրնար, հիմայ ինչ ժէօն-թուրքի աւել է այն, զոր առեր եւ բարենորոգման հրապարակը կ'աւել: Մարդ մը որ քանի մը հարիւր հազար հայոց ջարդին հանդիսատես ըլլալէ ետեւ, այսօր հայոց վիճակին բարւոյն հրահանգ տալու կելլէ, ինչ արժէք կ'ունենայ այնպիսի գործ մը, ընկան չէ՞ անոր վրայ կասկած ինչ. վասնզի դրացնիդ գաւակը կը մորթեն, կը տեսնաս ու չես խօսիր. քեզի արեւտ սորվեցնող վարպետդ՝ որ քեզի հօր մը պէս է, կը ջախջախեն. ու անտարբեր կը կենաս. տարիներով հացը կեբած հայ բարբարոզ ընտանիքը կը խողխողեն, կաղաղակէ, ձայնը կը լսես, եւ տեղէդ չես շարժիր. եւ այնպէս կը մնաս, որպէս թէ թուրքին ձեռքերը միայն հայ ջարդելու վարժ են եւ մեղք մ'է թուրքը այս ահարկու ոճիւրէն ետ կեցնել, ըլլայ դրամով, ըլլայ բանախօսութեամբ, ըլլայ հրատարակութեամբ եւ կամ որ եւ է կարելի եղած միջոցներով, որոց եւ ոչ մին չերեցաւ հրապարակի վրայ, ուր ծեր թուրքը տկար էր, լռեց: Ժէօն-թուրքերը երկչոտ էին. մինչեւ այսօր հինգ փարայի արժողութեամբ գործ մը չտեսան. իսկ կարող մասը կեղորոնին մէջ ձայն չհանան. հիմայ արտասահմանի մէջ մէկ մէկ կիկերոններ եղած են: Անոս այս կերպով հինգ հարիւր տարուան պարկեշտ ազգ մը կործանեցին, եւ աններելի ապերախտութեամբ մը մոռցան հինգ հարիւր տարուան բարի դրացի մը, հաւատարիմ հպատակ մը. եւ երկրին ամեն բարգաւաճման նախաձեռնարկ եղող աշխոյժ, մասցի, անձնուէր, եւ հնարամիտ ժողովուրդ մը, որուն կը պարտի տաճկաստան ամեն արհեստ եւ գիտութիւն, եւ այն մեծամեծ փրկութիւններն, զորս միմիայն հայք մատուցած են տաճկաց գահուն պահպանմանը համար:

Ծառք սրտի կ'ըսեմ թէ շատ փոքրովի գտնուեցան տաճիկները, որ հինգ դարու շարքին մէջ չ'իջեցին այն սրբազան եղբայրութիւնը, որ բազմաթիւ օրինակներով հաստատուած է թէ — Ֆարժիսի տղան անմէտ իւր մօրը տկարութեանը առթիւ Թաղուհի Տուտուին մայրական կաթովը մեծցած է, ինչպէս նաեւ Պօղոս՝ Այլիչէ հանմին մայրական կաթովը սնած եւ այնպէս ց'վերջ տեսակ մը ազգակցական անուամբ մէկզմէկ — սիւտ վայրտէ, եւ սիւտ քարտաշ կանուանէին:

Արդ այս քաղցրահոգի յիշատակը մոռնալը ինչ վայրագ ապերախտութիւն է:

Անաւասիկ Անմէտ Րիզայի եւ իւր նմաններուն առերեւոյթ նկարագրերը: Ինքը հայրենասէր տաճիկ մը, կ'աշխատի որ հայք կառավարութեան կամաքը համաձայն գան, եւ բարենորոգման արիւնտ քողին տակ վերստին ամփոփուին, իրենց ջարդուած ըլլալու յանցանքին համար — մեղա՛յ ըսեն — ավֆը շահանէ ըլլայ, բարենորոգումը սկսած պահուն ջարդն ու կեղեքումը վերսկսին, զոր ցայսօր փորձով կը տեսնանք. ահա այս է ուղուածը. մոռնալ հազարաւոր անձանց կորուստը, մոռնալ միլիոնաւոր առեւտրու կործանումն, եւ ապուշ ոչխարներու պէս վատթարագոյն քան զառաջինն մնալ հպատակ եւ ստրուկ, թերեւս այսուհետեւ կամայ ակամայ միւլալիման, որու փորձերը տեսնալը եւ զեռ պիտի շարունակէ մինչեւ որ հայք վերջանան կամ կրօնափոխութեամբ կամ ջարդուելով:

Վճռաբար գծուած երկու անել ճամբայ, որուն մէջ մտնող հայը անշուշտ կը կորսուի: Ուրիմն ընտրութիւնը հիմայ հայուն կը մնայ:

Առաջին հարցում  
Հակաքրիստոնէսայ մեռնիլ, թէ Գրիստոնէ-

կայ — Գրիստոնէութիւնը որ հաւատալեաց ճշմարտան է, քրիստոնէի մը պէտք է քրիստոնէայ մեռնիլ:

Երկրորդն որովհետեւ ապացուցեալ փորձառութեամբ գիտենք թէ, երբ մեր պատուոյ եւ կրօնքին ու կենաց թշնամի հակակրօն տաճիկն հպատակինք, փրկութիւն չունինք. քանի որ այսպէս պէտք է ըլլայ, ինչո՞ւ քրիստոնէայ տէրութեանց հպատակ չ'ըլլանք գէթ այսուհետեւ քրիստոնէայ ապրելու համար:

Փորձեալն կրկին փորձել յիմարութիւն է:

Ս . Ֆ .

ՈՂՋԵՐԹ ԱՌ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՍԵՆԵՔԵՐԻՍ Յ . ԲԻԻԶԻԲԵԱՆ

Վաղեմի բարեկամն իմ, որ կ'ըսես իւր մահկանացուն ի հասակի 65 ամաց:

Գնա՛ բարեկամ, գնա՛ դու երկինք, հողածին մարդոյ վերջին հայրենիք:

Մոռցի՛ր Արարատ, ու մոռցի՛ր Մասիս, մոռցի՛ր ողբերգու Եփրատն ու Տիգրիս:

Մոռցի՛ր եւ Տղմուտ, ուր որ Վարդանանց, մնայ քաջութեան յիշատակն անանց:

Մոռցի՛ր Հայաստան աշխարհին վայրեր, զոր շատ սիրեցիր սրտիւ անձնուէր:

Մոռցի՛ր այն սիրուն ծաղկունքն եղեմին, որք անմահութեան հոտ կը բուրբէին:

Չանոնք թառամեց խորշակ տաճկական, այլ քեզի համար չ'կայ Հայաստան:

Գնա՛ բարեկամ, գնա՛ դու երկինք, հողածին մարդոյ վերջին հայրենիք:

Գնա՛ լուսեղէն ամպեր պիտի գան, ու զքեզ տանին յաշխարհն յաւիտեան:

Հոն երանութիւն հոն կեանք երջանիկ, հոն ամենայն ինչ է միշտ գեղեցիկ:

Գնա՛ բաւ է որ թողիր երկթռչուն, մինն աղանի Մաքրուհի անուն:

Եւ միւսն Յովսէփ հարալատք քոյին, հողույդ երկհատոր յաջորդ սիրային:

Որք հանդերձեալ են գնալ այն ուղին, զոր դու զօնեցիր ոգւով ողբային:

Պարտիքդ ի կատար հասած են արդէն, մի՛ կենար, փութա՛. գնա՛ աշխարհէն:

Եւ երբոր նայիս վերէն գէպ ի վար, յիջէ՛ եւ զիս ալ ու մի՛ մոռանար:

Յիջէ՛ լոկ իմ սէր, իմ սէրն հայրենի, այսչափ միեթար կը բաւէ ինձի:

Գնա՛ այլ հանգչէ՛, գնա՛ դու յերկինք, հողածին մարդոյ վերջին հայրենիք:

Գահիբէ Ս . ՖելէկեԱՆ

ԱՂՈՏ ԼՈՅՍ ՄԸ

(Շարն. տե՛ս 116, 117, 118 եւ 119)

16. «Նոր Օր» ի եռամսեայ հաշուեկշիւին մէջ 33 զբի գումար մը նշանակուած է ելից կողմը, իբրեւ ծախք վարչութեան պաշտօնաւիթից տպագրութեան «Միութիւն» տպարանին մէջ: Մինչդեռ նոյն տպարանին մէջ տպագրուած «Նոր Օր» ի քանի թիւերուն հաշիւը չէ՛ նշանակուած, ոչ ալ մամուլի ծախքը, էւրաքա՛նք տպարանին: Օրը օրին կատարուած գործողութիւններն ո՛ր ժամանակին վերապահած է նշանակելու Տիգր Սմբատ Փափազեան:

17. Երկու եռամսեայ հաշուեկշիւները, որոնց վրայ հաշուեքնիչ յանձնախումբը տեղեկագիր մը ներկայած է ու սկսած է հրատարակել «Նոր Օր» ի մէջ, ըստ կանոնագրի տրամագրութեան, պէտք էր որ անմիջապէս հրատարակուէին թերթին մէջ, ի գիտութիւն ընկերութեան անդամոց եւ հասարակութեան, մինչդեռ մինչեւ ցայսօր չ'են հրատարակուած. ո՞վ է պատասխանատուն, եւ ինչ գիտումով:

18. Փարտուղար-Ներկայացուցչին յանձնուած «Նոր Օր» ի բոլոր ընկալագիրները պէտք է որ գօնորոյ մը ենթարկուին, հասկնալու համար թէ քանի՞ ընկալագիրներ սպառած են ու որչափ գրամ գանձուած. մինչդեռ այսօր զաղտնի կը մնայ այդ գաղտնիք մը. որ գիտեն միայն ինք Տիգր Ս. Փափազեան եւ առժամայ Մայր-Դիւանը:

18. Տիգր Ս. Շնորհքեանի երկար յօդուածին տպագրութեան առթիւ կատարուած բոլոր թղթակցութիւնները կը պահանջեմ որ պատուոյ աստիճան սեղանը բերուին, որովհետեւ այդ թղթակցութիւնները մեծ լոյս պիտի սփռեն իմ եւ Տիգր Ս. Փափազեանի միջեւ գոյացած ձգտեալ յարաբերութեան վրայ:

19. Հիմնադիր անդամոց «Նոր Օր» ի մէջ հրատարակուած բողոքագիրը պահանջուեցաւ օրակարգի մէջ անցնել սեպտ. 23 ի նստին. Մայր-Դիւանը չ'ուզեց նկատի առնել. յետ բաւական բանակութիւնը, որչափեցաւ յաջորդ, այսինքն սեպտ. 30 ի նստին օրակարգի առաջին հատուածն ընել այդ խնդիրը. մինչդեռ Մայր-Դիւանի կարգացած ատենագրութեան մէջ խեղճութեամբ էր այդ բանաձեւը, յաջորդ նստիս փոխուելով յաջորդ նստի մը:

20. Յիշեալ բողոքագիրն մէջ յիշուած է թէ՛ «Նոր Օր» ի եռամսեայ հաշուեկշիւը պէտք է պատրաստուած ըլլայ մինչեւ սեպտ. 2. ահա «Նոր Օր» ի թիւ 26 ի հրատարակութիւնը. «նկատելով որ ընկերութեան սեփականութիւնն եւ օրկան եղող «Նոր Օր» կ'իսապառաքեալ թիւ 24 ին մէջ ընկերութեան Գործ. Ժողովը յայտարարած էր ի պաշտօնէ թէ՛ «Նոր Օր» ի եռամսեայ հաշուեկշիւը պատրաստուելու համար պէտք էր սպասել մինչեւ սեպտ. 2, եւ այնուհետեւ խորհրդակցել Մայր-Դիւանի, որոշելու համար տարեկան ընդհ. ժողովոյ գումարման թուակները»: Արդ, Տիգր Փափազեան ինչո՞ւ համար մինչեւ այն թուակներ չ'յանձնեց հաշուեկշիւը Գործ. Ժողովոյ Դիւանին, եւ միայն սեպտ. 9. նստին երեւան հանց ընդհ. ժողովոյ սեղանին վրայ, ինչպէս առժամայ Մայր-Դիւանը լուռ մնաց այդ ապօրինութեան հանդէպ. ինչո՞ւ հաշուեքնիչ յանձնաժողովը ձեռք գարկաւ այդ հաշուեկշիւին — թէեւ առանց որեւէ քննութիւն կատարելու. — փոխանակ նախապէս յանձնելու գայն Գործ. Ժողովոյ Դիւանին:

21. Սեպտ. 23 ի նստին մէջ, Տիգր Փափազեան, առանց անդամ ըլլալու ընկերութեանը, երբ Գործ. Ժողովոյ խորհրդակցանքին Տիգր Ս. Գարագաշի կողմէն դիտել արուեստական թէ ինքը պարտ էր հաշուեկշիւը մատուցանել Գործ. Ժողովոյ, ըստ ծրարքին, յանկարծ ինքզինքը կորուսած, սպառնացաւ անտաքսել զՏիգր Ս. Գարագաշ ընդհ. ժողովէն ու գուրս հանել չէնքէն, որ ինչպէս գիտենք, իր անուշովը վարձուած է: Առժամայ Մայր-Դիւանն ինչ գիրք բռնեց այդ նախատալից արարքին հանդէպ. . . .

22. Սեպտ. 30 ի ընդհանուր ժողովոյ նրստին մէջ առժամայ Մայր-Դիւանի աստիճանագրու Տիգր Ս. Պէրպէրեան, փութկոտութիւն մ'ունենալ նախորդ նստին աստիճանագրութիւնը վաւերացնել տալու, արհամարելով ամեն օրինաւոր գիտողութիւն, որ կ'ուղղուէր ժողովակախումբը կողմէն պատրաստելով օրակարգէն չ'ընդհուր հարկը. մինչդեռ ժողովակախումբը գիտողութիւնները լուսաբանութիւններ կը բերէին:

23. Սեպտ. 30 ի նստին մէջ, առժամայ Մայր-Դիւանի աստիճանագրու կարգաւ հրաւիրեց բոլոր վճարող անդամներն ստորագրել իրենց ներկայութիւնը տեսակին մէջ. հրաւիրելոց մէջ էր նաեւ Տիգր Սմբատ փափազեան, որ ստորագրեց իբրեւ անդամ: Հիմնական կանոնագրին 25 եւ 26 յօդուածներուն ընթով կ'արտաքսուէ անդամակցութեան ամեն ընկեր որ իր արարքով կամ ընթացքով վնասակար եղած է ընկերութեան, կամ գեղծում մը գործած է: Արդ, այդ պաշտօնակա գործողութիւնը, որով խմբագրա-

պետին անդամակցութիւնն անգամ մ'ալ կը հաստատուի, ինքնին բաւական չ'է՝ ապացուցանելու թէ՛ առժամեայ Մայր-Դիւանը, ա՛յնքան կաշկանդուած իր ներքին դիտումներէն, անարժան էր վարելու իրեն վստահեալ պաշտօնը, թէ՛ խմբագրապետը՝ զերծ էր իրեն վերագրուած զեղծումներէն, քանի որ կը մնար անդամ ընկերութեան, ըստ առժամեայ Մայր-Դիւանի հրահրելին :

24, Սեպտ. 9. Ընդհ. ժողովոյ նստին մէջ երբ Գործ. ժողովը կարգաց տեղեկագիրը, ուր յիշուած էր նաեւ ժողովին հրատարականը, առժամեայ Մայր-Դիւանը, ըստ միահամուռ որոշման ընդհ. ժողովոյն, խնդրեց որ Գործ. ժողովը շարունակէ իր պաշտօնավարութիւնը ցընտրութիւն յաջորդ Գործ. ժողովոյն. իսկ սեպ. 23 ի նստին, երբ պատճառաբանեալ հրատարակելու կարգադրուեցաւ խմբագրապետին, հրատարակելու, որու ընթերցումէն բան մը չ'հասկցաւ ընդհ. ժողովը, եւ որուն մէջ բառն իսկ նկատուի չ'առնուեցաւ Մայր-Դիւանի կողմէն, մինչդեռ, կազմալուծեալ վարչութեան ամենապաշտօն Գարտուղար - Ներկայացուցչին կողմէն սեղանին վրայ դրուած նախատալից հրատարակման գրութիւնը բարձրաձայն, յստակ արտասանութեամբ կարգաց Տիար Ե. Աւագեան, ու առժամեայ Մայր-Դիւանն ասոր վրայ ածապարեց պահանջել խմբագրապետէն նամակատուի բանալին, զոր Գործ. ժողովը առած է թղթատարութեան տեսչութիւնէն այս տարուան փետրուարին, « Նոր Օր » ի երեւուածն 4 ամիս առաջ. այս պահանջումը կը կրկնուէր յանուն վարչութեան « Նոր Օր » ի : Մնացեալը գիտէք :

25. « Նոր Օր » ի հրատարակեալ խմբագրապետը կը մնար ատենապետ Գործ. ժողովոյ, ինչպէս նաեւ իր բոլոր անդամակիցները ցնոր ընտրութիւն յաջորդ Գործ. ժողովոյ, ինչպէս որ սեպտ. 9 ի նստին մէջ որոշուած էր : Առժամեայ Մայր-Դիւանը, ճարպիկ կարգադրութեամբ մը, սեպտ. 23 ի նստին ատենագրութեան մէջ կը ներմուծէ հատուած մը, որուն իմաստով՝ Գործ. ժողովոյ հրատարականը քուէարկութեամբ վերջնապէս ընդունուած է եղեր : Սեպտ. 30 ի նստին երբ այդ հատուածին դէմ բողոքները կը բարձրանան, ժողովականաց կողմէն, առժամեայ Մայր-Դիւանի Պատկ. ատենապետը կ'առնէ կը քայլէ, նոյն օրուան նիստը թողով երեսի վրայ . . . : Ու այս հանրային նախատանքին առջեւ ընկճած, « Նոր-Օր » ի թիւ 34 ի մէջ, քնակահարար միշտ վարչութեան անունով, անխիղճ զրպարտութիւններով շարունակ գրութեամբ մը կը սեւեցնէ ազգային բաժնին գլուխը, ու ասով, իր վրէժխնդրութիւնը լուծած կը նկատէ . . . :

Ահաւասիկ վերեւ նշանակեցի այն բոլոր ամբաստանութիւնները, զորս, ինչպէս որ խոստացած եմ, կ'ընամ հաստատել առժամեայ Մայր-Դիւանին եւ « Նոր Օր » ի Գարտուղար-Ներկայացուցչին վրայ : Դեռ կ'ա՛ն ուրիշ կէտեր ալ, իմ եւ իրենց ներքին յարաբերութեանց մէջ. զորս ի պահանջել հարկին, պիտի լուսարանեմ Պատ. ատենիդ առջեւ :

Արդ, ազնիւ հայրենակից, կը խնդրեմ որ ներկային պարունակութիւնը լուրջ նկատողութեան առնէք եւ փութով ի գործ դնէք ինչ որ արժանն է, յանուն ճշմարտութեան եւ արդարութեան եւ յանուն նուիրական շահերուն Լըսարան-Ընթերցատուն ընկերութեան, որուն ամբողջ տարի մը ծառայելու երջանկութիւնն ունեցած եմ :

Հաճեցէ՛ք ընդունիլ կանխայայտ շնորհակալեացս եւ անկեղծ յարգանացս հաւաստիքը :  
Չերդ անձնուէր  
Ս. ԲԻԻՐԱՏ

Հ Ե Ռ Ա Գ Ի Բ Ն Ե Ր

Լոնտոն 25 սեպտ. — Զօրավար Կէյչլի եւ խառն արշաւախումբը Բաօ-Թինկ-Պու հասան ամսոյս 19 ին : Ֆրանսացի եւ անգղիացի միտիօնարներ եւ բազմաթիւ եւրոպա-

ցիներ ողջ առողջ գտնուեցան : Ճարօն տէրութեանց առաջարկեց խաղաղութեան բանակցութիւնը անմիջապէս ձգել Բէքլին գրտնուող գիւանագէտներուն . Գերմանիա եւ ամերիկա հաւանեցան, եւ չ'կարծուի որ Մեծըն Բրիտանիա մերժէ :

Գէյթթաուն 25 սեպտ. — Զօրավար Սըր Ռ. Պըլլըր նաւ մտաւ :

Լոնտոն 25 սեպտ. — Լորտ Ռօպըրթս կը յուսայ որ պիտի կրնայ նոյնմբեր 15 ին մեկնիլ Հարաւային ամերիկէ : Ֆիլիթօլիս շատ օրեր Պօէրներուն ձեռքը մնալէն ետքը գըրաւուեցաւ անգղիացուց կողմէն :

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ՄԵՐՍԸ ԹԵՐԹԸ կ'ըսէ թէ՛ հաւանական է որ ո՛չ մի Տէրութիւն Հիւպատոսարան չի պիտի կրնայ հաստատել Սուտանական քաղաքներուն մէջ երեք չորս տարիէն առաջ :

ՍՈՒԼՍԱՆԻՆ ԲԵՌԱՅԸՐԸ Մահմուտ բաշա Տամատ անցեալ օր այցելութիւն տուաւ Լորտ Գրոմէրի : Տեսակցութիւնը տեւեց ժամը տասնմէկէն մինչեւ 12 1)2 :

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՅ ՈՐԲԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Պատ. Գործադիր ժողովը հետեւեալ նամակի հրատարակութիւնը կը խնդրէ մեզմէ :

- . . . Տնօրինութիւն
- ԱՐՇԱԼՈՅՍ Ազգօգուտ Լրագրի 'ի Բաղաքիս
- Գործադիր ժողովս շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ Պատ. ազգայիններէ իրենց զրկուած ԼՈՒՍԻՆԵԱՆԻՔ գրքոյկի արժէքն եւ իրենց նուէրները :
- Մեծ. Տիար Տր. Մախոխեանէ
- » » Տիգրան Մխիթարեանէ
- » » Ռուբին Մինէճեանէ
- » » Յ. Տէր Յարութիւնեանէ
- » » Գրիգոր Ակնավաճառէ
- 'ի Դիմաց Գործ. ժողովոյ Որբասիրաց Ընկերութեան Հայոց Գանձապետ Ատենապետ Կ. ԵՐԶԻՄԱՅԵԱՆ Ա. Մ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Ա Ձ Դ

Պատիւ ունինք յայտարարելու Պատուարժան ազգայնոց որ՝ Ընկերութեանս Գործադիր ժողովը այս օրէն սկսեալ պիտի կատարէ Ընկերութեան վերաբերեալ ամեն գործողութիւնք իր կնիքով եւ իր պատասխանատուութեան տակ :

'ի Դիմաց Մայր-Դիւանի Լսարան-Ընթերցատուն Ընկերութեան Ա. Ատենադպիր Ա. Ատենապետ Ե. ԲԷՐԵՍՏԷՃԵԱՆ Ա. ՊԱԼԵԱՆ Գահիրէ 26 Հոկտեմբեր 1900

ԱՐՇԱԼՈՅՍԻ Պատուարժան ընթերցողներէն մասնաւորապէս ներողութիւն կը խնդրուի, ներկայ եւ նախորդ թիւերու սակաւ ինչ յապաղմանը համար :

Այս յապաղումներուն պատճառը ուրիշ բան չէր, եթէ ոչ՝ թերթիս Տնօրէնին աներոյր հիւանդութիւնն ու անակնկալ մահը :

ԽՄԲ.

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Պրիւքսելէն ( Պելճիքայի մայրաքաղաք ) կը հաղորդուի որ Օսմանեան դեսպանատան ղեկավարական կցորդ Թէվֆիք բաշա իր պաշտօնէն արձակուելը խնդրած է Կ. Պոլսէն, որովհետեւ շատ ամիսներէ ի վեր ամսական առած չ'է :

— Գերմանական թերթ մը կը հրատարակէ Գահիրէի Գերմանական հիւպատոս Պ. Անթօնի մէկ տեղեկագիրը Եգիպտոսի մէջ հաւկիթի վաճառականութեան վրայ : Ըստ յիշեալ տեղեկագրոյն, վերջին եղանակի համար, այսինքն գեկտեմբերէն մինչեւ մարտին վերջը, արտածուեր է 50,000 մստուկ հաւկիթ, իւրաքանչիւր մստուկին պարունակութիւնը ըլլալով 1440 հաւկիթ : Նախորդ եղանակին արտածումը միայն 30,000 մստուկ եղած էր : Հաւկիթները գլխաւորաբար արտածուած են Գէնէյի, Կիրկէյի, Ասիւթի եւ Ֆէյումի նահանգներէն : Գերմանական հիւպատոսին տեղեկագրոյն մէջ շահեկան ուրիշ տեղեկութիւններ կան այս վաճառականութեան վրայ :

ՆԱԽԱԳԱՀ ՄԱՆԵՑՈՅԻ ՄԻ ՎՃՈՒՐ

Պ. Մանեօ, որ Շաթո-Թիէրրէյի դատարանին կը նախագահէ, հաճոյք կ'ըզայ աղմկայարոյց վճիռներ արձակելէ. վերջին անգամ տուած վճիռը բանակուհներու պատճառ պիտի ըլլայ անվրէպ կերպով :

Խնդիրը ժիւլի վ. անուն աղջկան մը վրայ է, որ գաղտնաբար ծնունդ տալով կենսալիւր մանկան մը, պորտալարը չ'կապեց եւ մանուկը մեռաւ : Պ. Մանեօ կ'ընդունի որ ամբաստանեալուհին գործեց այն տեսակ անգթութիւն մը եւ անխոհմտութիւն մը, զոր անփորձութիւնն ու երկունքը չէն կրնար բոլորովին արդարացնել. եւ հետեւաբար՝ անխոհմտութեամբ մարդասպանութեան տարրեր պակաս չեն խնդրոյն մէջ : Բայց եւ այնպէս Պ. Մանեօ յետաձգման օրէնքին կիրարկութեամբ միայն 16 ֆր. տուգանքի դատապարտեց ամբաստանեալուհին. որովհետեւ կ'ըսէ վճիռը՝ ընկերութիւնը օրիորդ վ. էն աւելի յանցապարտ է : Կարգացէ՛ք այս հետաքրքրական վճռոյն նկատելովները :

« Նկատելով թէ՛ պատժելէն առաջ դատարանի պարտականութիւնն է մեծ խնամքով վնասուել ճշմարիտ եւ սկզնական պատճառները այն պատժելի օրինազանցութեանց որոնց զսպումը կը խնդրէ ընկերութիւնը դատաւորէն .

Թէ՛ այս դէպքին մէջ, ճշգրտապէս եւ իր այժմեայ կազմակերպութեամբ նոյն իսկ ընկերութեան վրայ կիսնայ ժիւլի վ. ի կողմէն գործուած յանցանքին մեծ մասը .

Թէ՛ արդարեւ ժիւլի վ. կը յայտարարէ որ իր յղութիւնը ու մանկատաճութիւնը նոյն իսկ իր ընտանեաց անդամներէն ծածկելով ուրիշ բան ըրած չէ բայց միայն համակերպել վախին այն խուլ ատելութեան եւ անիմաստ պարտաւնաց որոնց կ'ենթարկուին ընդհանրապէս աղիլի-մայրերը . իբր թէ մայրութիւնը՝ պարտաճանաչ չ'մոռցներ ամեն օրինաւոր անկարգութիւնները եւ բարոյապէս չ'բարձրացներ ա-

մեն կին որ մայրութեան վիշտն ու բերկրութիւնը կ'զգայ .

Թէ՛ եթէ արդի ընկերութիւնը ներշնչած չ'ըլլար և չ'ներշնչէր զայն կազմող սերունդներուն արհամարհանք դէպ'ազլիկ մօր , այս վերջինը իր վիճակէն չ'պիտի ա՛մչնար , և զայն ծածկելու չ'պիտի ջանար .

Թէ՛ հետևաբար աղլիկ-մայրերն անարգող և անոնց մտորիչներուն խիստ ներողամիտ ընկերութեան վրայ կ'ըլինայ յղութեանց և ծածուկ մանկատածութեանց մանկանց համար այնքան ազեղալի հետեւանաց պատասխանատուութեան ամենամեծ մասը .

Նկատելով որ հալածիչ ընկերութեան անվիճելի յանցապարտութիւնը մեծապէս կը թեթևցնէ իր խնդրանքով հալածուած անձին յանցանքը .

Թէ՛ հետևաբար , ամեն տեսակետով , ի նպատակ ամբաստանելին գոյութիւն ունին շատ մը մեղմացուցիչ պարագաներ , որոցմէ պէտք է որ նա օգտուի .

Թէ՛ միայն ցաւալի կէտը այն է որ ժիւլի Վ . ինչպէս որ այսօր համոզուած է , չ'է ունեցած նկարագրի և սրտի բաւական անկախութիւն բարձրանալու այսպիսի ողբալի նախակարծիքներէն , որոնք սկզբնապատճառներն են հակամարդկային բազմութիւ յանցանքներու և ոճիրներու , ինչպէս նաև ըմբռնելու թէ՛ այն աղլիկ-մայրը որ կը գործադրէ մայրական ամեն պարտականութիւնները , այնքան աւելի արժանի է յարգանայ , որքան՝ գրեթէ միշտ նա միայն պիտի տոկայ մայրութեան ամեն պահանջներուն .

Ասկէ զատ , նկատելով որ՝ ցորչալի կիներ մարդու ստորակարգ կացութիւն մը պիտի ունենայ ընկերութեան մէջ , արդարութիւնը չ'ներէր որ ինք աւելի մեծ պատասխանատուութիւն ունենայ քան այն ընկերութիւնը , որ իր խնամակալութեան տակ կը պահէ զայն .

ԱՒԱԶԱԽՏԻ ԴԱՐՄԱՆ

Նախորդ գարեբու մագաղաթեայ բըժըղկարաններէն քաղուած և խիստ շատ փորձերէ վերջ , օգտակար արդիւնք ձեռք բերելէ յետոյ , կը փութամ յայտարարել աւաղախտի հիւանդութեամբ տառապողներուն և մասնաւորապէս դեղագործներու և բժշկաց՝ որպէսզի ուշադրութիւն դարձնեն սոյն օգտատար դարմանին վրայ .

Աւաղախտի միակ դարմանն ունենալու համար պէտք է դիմել ստորագրելոյս հասցէին ի ԳԱՅԷ ԵՓՐԱՏ , ՄՈՒՉԻՔԻ ԶՕՐԱՆՈՑԻՆ ԴԻՄԱՅ — Մէյտան ԱՊՏԻՆ .

Գիները

- 10 ֆրնգ մէկ բաժին աւաղ ունեցողի
- 20 » երկու » քար ունեցողի .
- 30 » երեք » արմատացած հիւանդութեանց .

Սոյն դարմանը գործածուած օրէն իսկ պիտի տեսնուի աւաղութեան նշաններն և քիչ ժամանակէն կատարելապէս առողջացած պիտի ըլլան այս հիւանդութեամբ տառապողները .

ԴԱՆԻՆԻ ԶԱՅԱԳՈՐԾԵԱՆ

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ  
«ԱՐՇԱԼՈՅՍ»

Հիմնեալ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻԶԸԸ

Օտևանիյի դեղատանին դիմացի փողոցին մեջ .

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին .

Այցեխարտեր, Երջարեւակներ, Գիտիկեր, Հրախարտեր, Մահադրմներ, Տեղեկագիրներ, Կաւոնագիրներ, Տոմար և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ .

Ամենակատարեալ ճշգրտագոյնութիւն և չափաւոր գին .

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՍԻ ԵՆ .

ԺԱՄԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԿՈՒՉԷՔ ՈՒՍԱՆԻՎ

Երկուստորը մը որ երկար տարիներ ժամագործութեան արհեստին հետեւելով կատարեալ հմտութիւն ստացած է ամեն տեսակ ժամացոյցներ նորոգելու արհեստին մէջ , կ'ուզէ ունենալ ընկեր մը՝ որ վաճառատուն մը բանալու գրամագլուխ և միանգամայն քիչ ստանի մէջ արհեստը ուսանելու փափաքը ունենայ .

Արհեստաւոր երկուստորը կը գտնուի ԳԱՅԷ ԵՓՐԱՏ ուր կրնան իրեն հետ բանակցել , անոնք որ հետամուտ են .

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Չ Դ

Նոր կեանք ի եւ Անահիտ ի ԱՆԹԵՐԻ մի հաւաքածոյն ունենալ փափաքողք առիթը ձեռքէ չ'փախցնելով փութով Խմբագրատունս դիմեն , գիւրագին զայնս գնելու .

ՀՅԻՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ  
ՈՒՐԱՄ 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1900

7604	1774	2958	9208	5811	9556
1389	4435	4432	5204	1166	6928
6207	1064	8498	5205	3555	9010
2209	6295	6418	9632	6807	8998
6436	0043	6399			

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅ  
ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ԱՇԻՍՐՉԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԷ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ  
ԵՐԱՇԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵՍ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենն աւելի չափարժիւնները .  
Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպատակ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութեան մէջ միլիարդ աւելի է .  
Ս . ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ՄԻ ՄՆԱՔ ԵՐԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՆ

Գանի սր Սէլվաճեան վաճառատան մէջ (ի Մուսրի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՐՆ ի նիքէլ , կոթէն լարող սիրուն ժամացոյցներ սրոց լաւ բանիւր երաշխաւորեալ է : Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐՆ է սկսեալ մինչև 2500 ՂՐՆ : Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ , նիքէլ , և օքսիտէ ժամացոյցներ . պատի և քոնսօլի բազմազան Բանտի լներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք .  
Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Գոհարեղէնքերու :

Ա Չ Դ

Գրիի Օրօր գիւղի Ալգալիներէն Տիար Մարտիրոս Ենիօեանի որդի Պ . Կարապետ Ենիօեան 26 ամեայ երիտասարդը Հայալիսի դէպքերէն ի վեր անհետացած է և իւր Գահիրէաբնակ ազգականները կ'օգնեն գիտնալ թէ ո՞ւր կը գտնուի այդ երիտասարդը .

Կը խնդրուի ուրեմն մեր Պատ . Ալգալիներէն որ եթէ գիտեն յիշեալ երիտասարդին ուր գտնուիլը կամ եթէ ո՛ր և է տեղեկութիւն ունին անոր մասին , բարեհաճին ծանուցանել Արշալոյս ի Տնօրինութեան :

Նոյնպէս կը խնդրուի մեր Արատասահմանի Պատուարժան պաշտօնակիցներէն , որ շնորհ ընեն ներկայ ազգարարութիւնը կրկնել իրենց թերթերուն մէջ . ի հարկին նշանակուած ծառայութիւններ սպասելով մեզմէ :

Ա . Պ Ա Լ Ե Ա Ն

Մ Ա Թ Ի Լ Տ

( Գաղթականաց կեանքէն )

ԳԻՆ 50 ՍԱՆՓԻՄ

ԳԻՄԵԼ ԹԵՐԹԻՄ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՀԱՒԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ . ԵՂԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԵԶ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աշակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյից գնել փափաքողներ կամ բաժանորդներու յիշուողներն , կրնան գիլել Արշալոյս ի յիշուողներէն ՍՊԱՐԱՆԻ ՀԻՐՈՒՆԱԳԻՐ — Տնօրինի .

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅ  
ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ԱՇԻՍՐՉԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԷ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ  
ԵՐԱՇԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵՍ 437 ՄԻԼՈՆ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ , ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ .  
ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻԶՈՆ գլխաւոր գործաւ կատար յ'Ալեքսանդրիա .